ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հունիսի 2021 թվականի N 67-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 62-Ն որոշման 2-րդ մասը , ***որոշում եմ.***

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի 2021 թվականի բյուջեի հոդվածներում կատարել հետևյալ վերաբաշխումները.

1. Ծախսային մաս, ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝

1) բաժին 1, խումբ 1, դաս 1, հոդված 4239՝ «500.0» թիվը փոխարինել «295.0» թվով,

2) բաժին 1, խումբ 1, դաս 1, հոդված 4221՝ «300.0» թիվը փոխարինել «505.0» թվով,

3) բաժին 4, խումբ 5, դաս 1, հոդված 4251՝ «1500.0» թիվը փոխարինել «1400.0» թվով,

4) բաժին 4, խումբ 5, դաս 1, հոդված 4264՝ «3500.0» թիվը փոխարինել «3600.0» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈՂԱՐԻՆՈՂ՝ Լ.ԿՈՆԴՅԱՆ

2021 թվականի հունիսի 29
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հունիսի 2021 թվականի N 68-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 15-Ի N 5-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի դրույթներով **որոշում եմ.**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի 2021 թվականի հունվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի 2021 թվականի բյուջեի եռամսյա համամասնությունները հաստատելու մասին» N 5-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. «Համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման» հատված 2-ում
   1) բաժին 01, խումբ 1, դաս 1 «Օրենսդիր գործադիր մարմիններ, պետական կառավարում»՝

   ա. 4221 հոդվածով 2-րդ եռամսյակում նախատեսված «100.0» թիվը փոխարինել «305.0» թվով,

   բ. 4239 հոդվածով 2-րդ եռամսյակում նախատեսված «250.0» թիվը փոխարինել «45.0» թվով,
   2) բաժին 01, խումբ 3, դաս 3 «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ՝ ՔԿԱԳ», 4221 հոդվածով 2-րդ եռամսյակում նախատեսված «64.0» թիվը փոխարինել «70.0» թվով:

3) բաժին 04, խումբ 5, դաս 1 «Ճանապարհային տրանսպորտ», 4264 հոդվածով 2-րդ եռամսյակում նախատեսված «2000.0» թիվը փոխարինել «3600.0» թվով:
4) բաժին 11, խումբ 1, դաս 2 «Համայնքների պահուստային ֆոնդ» 4891 հոդվածով 2-րդ եռամսյակում նախատեսված «21505.9» թիվը փոխարինել «19899.9» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈՂԱՐԻՆՈՂ **Լ.ԿՈՆԴՅԱՆ**

2021 թվականի հունիսի 29
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 հուլիսի 2021 թվականի N 69 - Ա

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԺՈՐԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ, ԱՐՓԻԿ ԽԱՉԻԿԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ, ՀԵՐՄԻՆԵ ԺՈՐԱՅԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ, ԿԱՄՈ ԺՈՐԱՅԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ, ՆԱԻՐԱ ՖՐՈՒՆԶԻԿԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ ԵՎ ԱՐՓԻՆԵ ԿԱՄՈՅԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, 08-0118-0061 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով, 50-րդ կետով և հիմք ընդունելով Արփիկ Խաչիկի Մովսիսյանի 2021 թվականի հուլիսի 1-ի Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրած դիմումը, **որոշում եմ**.

քաղաքացիներ Ժորա Համբարձումի Մովսիսյաննի, Արփիկ խաչիկի Մովսիսյանին, Հերմինե Ժորայի Մովսիսյանին, Կամո Ժորայի Մովսիսյանին, Նաիրա Ֆրունզիկի Մովսիսյանին և Արփինե Կամոյի Մովսիսյանին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետութուն, Շիրակի մարզ, գյուղ Աշոցք, Կրասարի խճուղի, 4-րդ փակուղի, հողամաս 8 հասցեում գտնվող 08-015-0118-0061 կադաստրային ծածկագրով հողամասին /վկայական N 30062021-08-0041/ տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետութուն Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, Կրասարի խճուղի, 4-րդ փակուղի, հողամաս 8:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈՂԱՐԻՆՈՂ Լ. ԿՈՆԴՅԱՆ

2021 թվականի հուլիսի 1
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 հուլիսի 2021 թվականի N 70 - Ա

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԺՈՐԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ ԵՎ ԱՐՓԻԿ ԽԱՉԻԿԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, 08-0017-0011 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով, 50-րդ կետով և հիմք ընդունելով Արփիկ Խաչիկի Մովսիսյանի 2021 թվականի հուլիսի 1-ի Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրած դիմումը, **որոշում եմ**.

քաղաքացիներ Ժորա Համբարձումի Մովսիսյաննին և Արփիկ խաչիկի Մովսիսյանին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետութուն, Շիրակի մարզ, գյուղ Աշոցք, 1-ին փողոց, 4-րդ փակուղի, բնակելի տուն 12 հասցեում գտնվող 08-015-0017-0011 կադաստրային ծածկագրով բնակելի տանը /վկայական N 30062021-08-0044/ տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետութուն Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, 1-ին փողոց, 4-րդ փակուղի, բնակելի տուն 12:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈՂԱՐԻՆՈՂ Լ. ԿՈՆԴՅԱՆ

2021 թվականի հուլիսի 1
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 հուլիսի 2021 թվականի N 71 - Ա

«ՀԷՑ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ, Հայաստանի Հանրապետություն կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ և 23.1-րդ կետերով, ***որոշում եմ՝***

«ՀԷՑ» ՓԲ ընկերությանը տալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Սարագյուղ բնակավայրի 4-րդ փողոցի թիվ 1 հասցեում «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲ ընկերությանը պատկանող տարածքի 10 կվ էլելտրամատակարարման աշխատանքների կատարման շինարարության թույլտվություն (ձև N 2-3-1 -ը կցվում է):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2021 թվականի հուլիսի 6
գյուղ Աշոցք

Ձև N 2-3-1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Շիրակի մարզ, Աշոցք համայնք
(ՀՀ մարզը, համայնքը)

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
N 4 6.07.2021 թ.

Տրված է կառուցապատող «ՀԷՑ» ՓԲԸ -ին՝
(իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման

_____
վկայականի համարը, գտնվելու վայրը, հողամասի գտնվելու վայրը)

ՀՀ Շիրակի մարզ, Աշոցք համայնք, բն, Սարագյուղ, 4-րդ փող., Թիվ 1 հասցեում , «ՎԵՈԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ-ին պատկանող տարածքի 10կվ էլեկտրամատակարարման օբյեկտի
(օբյեկտի անվանումը, հակիրճ բնութագիրը, հիմնական ցուցանիշները)

արդիականացման աշխատանքների կատարման համար՝ 4889-ԷՄ:

1. Գծային ինժեներական ենթակառուցվածքների ստեղծման (արդիականացման) հետագիծ-նախագծային փաստաթղթերը մշակվել են «Վոլիոս նախագծային ինստիտուտ» ՓԲԸ
(նախագծային փաստաթղթերի փուլը,

լիցենզիա ՔՊԼ-17208 կողմից:
նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

2. Շինարարական աշխատանքներն իրականացնել 12 /տասներկու/ ամսվա ընթացքում:
(նշել շինարարության նորմատիվային տևողությունը)

3. Հատուկ պայմաններ՝
1) կառուցապատողը, նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ.
2) շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 123-126-րդ կետերով սահմանված պահանջները:
4. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ՝

_____ Կ. Մանուկյան
(ստորագրությունը անունն, ազգանունը)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 հուլիսի 2021 թվականի N 72 - Ա

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԼԵՎՈՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ, ԱՄԱԼՅԱ ԱԲՐԵՅԱՆԻՆ, ԳՈՀԱՐԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ, ԼԵՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԵՎ ՆԱԻՐԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, 08-015-051-002-1 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով, 50-րդ կետով և հիմք ընդունելով Ամալյա Կարապետյանի 2021 թվականի հուլիսի 6-ի Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրած դիմումը, **որոշում եմ**.

քաղաքացիներ Լևոն Կարապետյանին, Ամալյա Աբրեյանին, Գոհարիկ Կարապետյանին և Նաիրա Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, գյուղ Աշոցք, 2-րդ թաղամաս, 2-րդ փողոց, բնակելի տուն 2 հասցեում գտնվող 08-015-051-002-1 կադաստրային ծածկագրով բնակելի տանը /գրանցված՝ 2006 թվականի հունվարի 28-ին, վկայական N 2034903/ տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, 2-րդ թաղամաս, 2-րդ փողոց, բնակելի տուն 2:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2021 թվականի հուլիսի 6
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 հուլիսի 2021 թվականի N 73 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և Հայաստանի Հանրապետություն կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետերով, ***որոշում եմ՝***

Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը տալ Մ-1 Երևան-Գյումրի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ152+600-կմ156+700 հատվածի հիմնանորոգման աշխատանքների կատարման շինարարության թույլտվություն (ձև N 2-3-ը կցվում է):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2021 թվականի հուլիսի 6
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Շիրակի մարզ, Աշոցք համայնք
(ՀՀ մարզ, համայնք)

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

N 5 6 հունիսի 2021 թ.

Տրված է կառուցապատող ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
(իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման վկայականի համարը,
Երևան 0010, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3
ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հասցեն, հողամասի գտնվելու վայրը)

Մ-1 Երևան-Գյումրի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապահի կմ152+600-կմ156+700 հատվածի հիմնանորոգման (3 ռիսկայնության) աշխատանքների
(օբյեկտի անվանումը, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), հակիրճ բնութագիրը, հիմնական ցուցանիշները)

կատարման, այդ թվում՝ (նոր կառուցման, վերակառուցման, վերականգնման, ուժեղացման և այլն) կառուցապատվողհողամասի գլխավոր հատակագծի վրա նշված ոչ հիմնական կառույցների _____

_____ տեղադրման համար:
(նշվում են ոչ հիմնական կառույցների անվանումները)

1. Օբյեկտի նախագծային փաստաթղթերը՝

1) մշակվել են **«Անահիտ-Գևորգյան» ԱՁ-ի՝ /լից. N ՔՊԼ 17292/** - ի կողմից.
կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)
(նախագծային փաստաթղթերի փուլը, նախագծային աշխատանքների

2) ստացել է (են) (եզրակացությունները) **«12» «04» 2021թ. N 22/21-Փ** փորձագիտական դրական եզրակացությունը

պարզ փորձաքննություն
(նշել փորձաքննության տեսակը)

«Աստիճան» ՍՊ-ի /պետ, լից. NoՔՊԼ 17044/ - ի կողմից
(նշել փորձաքննության մարմնի (մարմինների) անվանումը, լիցենզիայի համարը)

կամ

նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորագիրը՝ (նշել նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորության պայմանագրի համարը)

3) սահմանված կարգով համաձայնեցվել են իրավասու մարմնի, օրենքով սահմանված այլ շահագրգիռ մարմինների **ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի** հետ
(նշել մարմինների անվանումները և համաձայնեցման ժամկետները)

2. Շինարարական աշխատանքներն իրականացնել **պայմանագրով սահմանված ժամկետի** ընթացքում՝
(նշել շինարարության նորմատիվային տևողությունը)

Ներառյալ ավարտական ակտի տրամադրման համար ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

2.1. Ապահովել օբյեկտի շահագործման թույլտվության ստացումը՝

[] ավարտական ակտի տրամադրումից---------- ամսվա ընթացքում
[] ավարտական ակտի տրամադրման օրը:
Ներառյալ ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

3. Շինարարության վարման մատյանը բաղկացած է 82 էջից, կարված և դրոշմակնքված է

Աշոցք համայնքի ղեկավարի կողմից կողմից:
(իրավասու մարմնի անվանումը)

4. Նախագծային փաստաթղթերը փոփոխվել են (լրացվում է N 1 հավելվածի 110-րդ կետով նախատեսված դեպքերում) _____ կողմից
(նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

և սահմանված կարգով համաձայնեցվել իրավասու _____ և այլ մարմնի
(նշել իրավասու մարմնի անվանումը)
շահագրգիռ մարմինների _____ հետ:
(նշել օրենքով սահմանված համաձայնեցնող մարմինների անվանումները)

5. Հատուկ պայմաններ՝

1) կառուցապատողը, նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ.
2) շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են N 1 հավելվածի 125-128-րդ կետերով սահմանված պահանջները.
3) *(լրացվում է N 1 հավելվածի* 86-րդ կետով *սահմանված դեպքերում)* սույն թույլտվությունը տրվել է սահմանված կարգով հաստատված «Նախագիծ» փուլի հիման վրա, որին հաջորդող «Աշխատանքային փաստաթղթեր» փուլը պետք է ապահովի հաստատված փուլով ընդունված լուծումները և աշխատանքների իրականացման հաջորդականությունը

_____
_____ :
(նշվում են նախապատրաստական, հողային, շինմոնտաժային աշխատանքները և այլ աշխատանքներ)

6. *(լրացվում է N 1 հավելվածի 13-րդ կետով սահմանված դեպքերում)*
Հաշվի առնելով, որ կառուցվող օբյեկտի շինարարությունը հնարավոր չէ առանց գլխավոր հատակագծի վրա _____ համարների տակ նշված շենքի (շենքերի) և կամ շինության (շինությունների)
_____ քանդման՝
(նշվում են ամբողջությամբ կամ մասամբ քանդման ենթակա օբյեկտները, դրանց հիմնական ցուցանիշները, ընդհանուր մակերեսը, հարկայնությունը, շինանյութերը և այլն)

սեփականատիրոջը (օգտագործողին) _____ տրված սույն
(նշվում է պետական գրանցման վկայականի համարը)
թույլտվությունը
նաև քանդման թույլտվություն է:
Օբյեկտի քանդման աշխատանքներն իրականացնել նախագծային փաստաթղթերով ամրագրված հաջորդականությամբ:

7. Այլ պայմաններ _____:
(նշվում են իրավական ակտերով և (կամ) պայմանագրով նախատեսված այլ պայմանները)

8. Կառուցապատողը շինարարական (քանդման, ապամոնտաժման) աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ, համաձայն N 5 հավելվածի N 2-5 ձևի, տեղեկացնում է իրավասու մարմնին:
9. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

_____ Կ. Մանուկյան
(ստորագրություն անուն, ազգանուն)

Կ. Տ.